ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ

Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն

Ֆինանսական Հաշվետվություններ

2023թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ

Մարտ 2024Թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթագրություն	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1,140	1,596
Ոչ նյութական ակտիվներ		133	158
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերելու համար		8	180
Հետաձգված հարկային ակտիվներ		691	252
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,972**	**2,186**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		71	148
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	13,965	3,840
Պարտքեր շահութահարկի գծով		-	-
Տրամադրված փոխառություններ	6	22,073	17,200
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	10,706	12,370
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**46,815**	**33,558**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**48,787**	**35,744**
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Համալրված բաժնետիրական կապիտալ	8	100	100
Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)		40,060	29,291
Ընդամենը սեփական կապիտալ		**40,160**	**29,391**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված փոխառություններ		-	2,500
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	8,627	3,853
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		8,627	**6,353**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**48,787**	**35,744**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Գլոբ աուդիտ» ՍՊԸ ղեկավարության կողմից 2024թ. մարտի 27-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Տնօրեն
Դ.Հարությունյան

Գլխավոր հաշվապահ
Տ.Սարգսյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	ծանոթ	2023թ.	2022թ.
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	10	84,590	38,530
Վաճառքի ինքնարժեք	10	(44,529)	(18,911)
Համախառն շահույթ (վնաս)		**40,061**	**19,619**
Վարչական ծախսեր	11	(21,200)	(8,021)
Այլ եկամուտ	13	-	52
Այլ ծախսեր	12	(5,625)	(4,765)
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը		**13,236**	**6,885**
Շահութահարկի գծով ծախս	14	(2,467)	(1,290)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		**10,769**	**5,595**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**10,769**	**5,595**

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Համալրված բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը
2022թ հունվարի 1-ի դրությամբ	**100**	**23,696**	**23,796**
Վճարված շահաբաժիններ	-		-
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	5,595	5,595
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**100**	**29,291**	**29,391**
Վճարված շահաբաժիններ	-	-	-
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	10,769	10,769
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**100**	**40,060**	**40,160**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2023թ	2022թ
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**12,370**	**17,535**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	94,765	46,148
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(49,151)	(18,056)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(9,462)	(7,397)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ	(29,919)	(16,627)
Այլ վճարումներ	(59)	(87)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**6,174**	**3,981**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից, տրամադրված փոխառությունների վերադարձից	3,300	15,752
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր		3,051
Հիմնական միջոցների ձեռք բերում	(465)	(2,047)
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից, փոխառությունների տրամադրումից	(8,173)	(28,402)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(5,338)**	**(11,646)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր		2,500
Եկամուտներին վերաբերվող շնորհ		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր	(2,500)	
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(2,500)**	**2,500**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(1,664)**	**(5,165)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**-**	**-**
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**10,706**	**12,370**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ընդհանուր տեղեկություններ

1.1 Կազմակերպությունը

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն)) ստեղծվել է 2014-ին:
Ընկերության կանոնադրությունը գրանցվել է 01.04.2014թ ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման թիվ 264.110.807295, գրանցման վկայական՝ 03Ա 957295, հարկային հաշվառման համարը՝00131856:

Ընկերության իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Երևան, Շենգավիթ 0072 Նորագավիթ 13փ, 21/1տ:

Ընկերության կառավարման մարմիններն են՝

-բաժնետերերի ընդհանուր ժողովը,

Ընկերության մասնակիցներն են՝

1. Դավիթ Հարությունյանը 40%

2. Կարինե Շահինյանը 30%

3. Տաթևիկ Սարգսյանը 30%

Ընկերության տնօրենը

-Դավիթ Վալերիի Հարությունյան

2023թ. Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել 10 մարդ (2022թ. 8 մարդ):

1.2 Հիմնական գործունեությունը

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են աուդիտորական և հաշվապահական ծառայությունների մատուցում:Ընկերությունը իր գործունեությունը իրականացնելու համար ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացել է ԱԾ N101 լիցենզիա:

Ընկերությունը համարվում է Աուդիտորների և Փորձագետ հաշվապահների Պալատի անդամ՝ համաձայն ՀԱՊ խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի նիստի 25Ա որոշման (գրանցման համարը Պալատի ռեեստրում՝ ՀԳԳՀ 1 20 0423):

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 ՀՀՄՍ 1 համաձայն ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի համաձայն: Ընկերությունը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով, երկու առանձին հաշվետվությունների փոխարեն (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն և, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն):

Համաձայն ՖՀՄՍ-ի Ընկերությունը ներկայացնում է ֆինանսական վիճակի մասին երկու հաշվետվություն: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում Ընկերությունը ներկայացնելու է երկու համադրելի ժամանակաշրջաններ միայն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հետընթաց կիրառման, ֆինանսական

հաշվետվություններում հոդվածների հետընթաց վերաներկայացման, կամ ֆինանսական հաշվետվություններում հոդվածների վերադասակարգման դեպքերում:

2.5 Նոր և փոխոխված ՖՀՄՍ կիրառումը

Ընթացիկ տարում Ընկերությունը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2017թ հունվարի 1-ից հետո սկսվող ժամանակաշրջանի համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի կողմից:

3.Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցների վաճառքից օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով մուտքերը հաշվակշռային արժեքի հետ և ճանաչվում շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն, երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Ընկերության մտադրություններին համապատասխան: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի համար, որի արժեքը նշանակալի է միավորի ընդհանուր արժեքի նկատմամբ, մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների համար կիրառվող մաշվածության հաշվարկման մեթոդը առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ վերանայվում է, եթե այդ

ակտիվներից սպասվող տնտեսական օգուտների ստացման ակնկալվող մոդելի մեջ տեղի է ունեցել նշանակալի փոփոխություն:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են.

արտադրատնտեսական գույք	5-8 տարի
հաշվողական և համակարգչային տեխնիկա	1-3 տարի:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը գնահատված արժեք է, որը Ընկերությունը ենթադրում է ստանալ ակտիվի օգտակար ծառայության ժամկետը լրանալուց հետո՝ ժամկետի վերջում ակնկալվող վաճառքից նվազեցնելով ակտիվի վաճառքի համար անհրաժեշտ գումարով:

Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից:

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

համակարգչային ծրագրեր՝	10 տարի

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը , որը չափվում է որպես օտարումից զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը գնահատում է իր նյութական և ոչ

Օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվները և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվների արժեզրկումը ստուգվում է առնվազն տարեկան և ցանկացած ժամանակ, երբ կա հայտանիշ, որ այդ ակտիվը կարող է արժեզրկվել:

3.3 Վարձակալված ակտիվներ

Ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի փոքր է: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Երբ վարձակալական պայմանագրով վարձատուից Ընկերությանը չեն փոխանցվում վարձակալվող գույքի հետ կապված էականորեն բոլոր ռիսկերը և հատույցները, ապա այն դիտվում է որպես գործառնական վարձակալություն:

Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում վարձակալության ժամկետի ընթացքում*:*

3.4 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժութային շուկա ներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով :

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.5 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է առաջին մուտք առաջին ելք բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը: Պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման զուտ արժեք ցանկացած իջեցման գումար, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը: Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման զուտ արժեքի աճից, ճանաչվում է որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

3.6 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի

տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

3.7 Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները: Հասույթից նվազեցվում են վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարները և գնահատված նվազեցումները:

Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ Ընկերությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, չի պահպանում ո՞չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ո՞չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում, ինչպես նաև երբ հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը, հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն, և գործարքի հետ կապված կատարված կամ կատար-վելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝ հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը, հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Շահաբաժիններից և տոկոսներից եկամուտ

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի

նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

Վարձակալական եկամուտ

Ներդրումային գույքից վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում*:*

3.8 Հարկեր

Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, չօգտագործած հարկային վնասների և զեղչերի համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք նախատեսվում են կիրառել այն ժամանակաշրջանում, երբ ակտիվը կիրացվի կամ պարտավորությունը կմարվի՝ հիմք ընդունելով հարկերի դրույքաչափերը և հարկային օրենքները, որոնք գործում են հաշվետու ժամանակաշրջանում:

Շահույթից համ վնասից դուրս ճանաչված հոդվածներին վերաբերող հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթից կամ վնասից դուրս: Հետաձգված հարկային հոդվածները ճանաչվում են՝ հիմքում ընկած գործարքներից կախված կամ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե առկա է ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվնեն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն առկա է մտադրություն հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիները իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

Իրացման հարկեր (անուղղակի հարկեր)

Հասույթը, ծախսերը և ակտիվները ճանաչվում են զուտ իրացման հարկերից՝ բացառությամբ

(ա) երբ իրացման հարկն առաջացել է այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից: Այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հոդված

(բ) դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլելիս, որոնք ներկայացված են իրացման հարկերի գումարը ներառյալ

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դեբիտորական կամ կրեդիտորական պարտք:

3.9 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

(ա) ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,

(բ) փոխառություններ դեբիտորական պարտքեր,

(գ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,

(դ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասերը պետք է ճանաչվեն շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Ընկերության ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 12 -ում:

***(ա)* Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով**

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ

վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվով, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ժամանակում վաճառելու կամ հետ գնվելու նպատակով:Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախատեսված ֆինանսական ակտիվները նախատեսվում են սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ միայն այն դեպքում, երբ ՀՀՄՍ 39-ի սահմանած չափանիշները բավարարված են:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ հաշվառվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի զուտ փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս կամ ֆինանսական եկամուտ:

Ընկերությունը չի նախատեսել որևէ ֆինանսական ակտիվ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(բ) Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև դրամարկղում և բանկերում մնացորդները:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային

հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

(գ) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

Ավանդները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ավանդների հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(դ) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար:

Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է , երբ ակտիվից դրամական հոսքեր ստանալու պայմանագրային իրավունքի ժամկետն ավարտված է կամ երբ Ընկերությունը մեկ այլ կազմակերպության փոխանցել է ֆինանսական ակտիվը և դրա սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները:

Ֆինանսական ակտիվի ամբողջական ապաճանաչման ժամանակ ակտիվի հաշվեկշռային արժեքի և ստացված կամ ստացվելիք հատուցման գումարի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված կուտակային օգուտի կամ կորստի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, բանկային օվերդրաֆտները, վարկերը և փոխառությունները, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը և ածանցյալ ֆինանսական գործիքները: Հիմնադրամը որոշում է ֆինանսական պարտավորությունների դասը սկզբնական ճանաչման ժամանակ: Ընկերության ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 12-ում:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի և փոխառությունների պարագայում՝ ներառյալ ուղղակի վերագրելի գործարքի ծախսումները: Ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը կախված է ըստ ստորև ներկայացված դասակարգումից՝

(ա) ֆինանսական պարտավորություններ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունները և այն ֆինանսական պարտավորությունները, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսվել են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում վաճառելու նպատակով: Առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների գծով օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(բ) Այլ ֆինանսական պարտավորություններ

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ

ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը: Նույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա պետք է հին պարտավորությունը ապաճանաչել և նոր պարտավորությունը ճանաչել՝ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպելով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում այն և միայն այն դեպքում, երբ գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմունքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

3.10 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը

էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել:Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

4. Հիմնական միջոցներ

	Մեքենա սարքավորումներ	Արտադրական տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական/վերագնահատված արժեք				
Առ 1 հունվարի 2022թ.	**1,710**	**235**	257	**2,202**
Ավելացումներ	1,054		738	1,792
Նվազեցումներ	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-
Ներքին շարժ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**2,764**	**235**	**995**	**3,994**
Ավելացումներ	332	-	284	616
Նվազեցումներ	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-
Վերագնահատում/արժեզրկում	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**3,096**	**235**	**1,279**	**4,610**
Կուտակված մաշվածություն				
Առ 1 հունվարի 2022թ.	**1,684**	**204**	**227**	**2,115**
Ավելացումներ	213	30	40	**283**
Նվազեցումներ	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-
Վերագնահատում/արժեզրկում	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**1,897**	**234**	**267**	**2,398**
Ավելացումներ	940	1	131	**1,072**
Նվազեցումներ	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-
Վերագնահատում/արժեզրկում	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**2,837**	**235**	**398**	**3,470**
Հաշվեկշռային արժեք				
Առ 1 հունվարի 2022թ.	**26**	**31**	**30**	**87**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**867**	**1**	**728**	**1,596**
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**259**	-	**881**	**1,140**

5. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	10,540	3,796
Տրված ընթացիկ կանխավճարներ	362	12
Դեբիտորական պարտք աշխատավարձի գծով	243	-
Դեբիտորական պարտք հարկերի գծով	2,820	32
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**13,965**	**3,840**

Առևտրային դեբիտորական պարտքերից գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

6. Տրամադրված փոխառություններ

Համաձայն 01.02.2023թ.-ին և 08.12.2023թ.-ին կնքված պայմանագրերի, Ընկերությունը տրամադրել է փոխառություն Դավիթ Հարությունյանին 3,000 հազ. դրամ: Փոխառության գումարը տրամադրվել է փոխառուին անտոկոս՝ մինչև 31.12.2024թ.:

Համաձայն 07.09.2023թ. և 13.12.2023թ.-ին կնքված պայմանագրերի, Ընկերությունը տրամադրել է փոխառություն Կարինե Շահինյանին 3,673 հազ. դրամ: Փոխառության գումարը տրամադրվել է փոխառուին անտոկոս՝ մինչև 31.12.2024թ.:

Համաձայն 13.01.2022թ. և 30.08.2022թ.-ին կնքված պայմանագրերի, Ընկերությունը տրամադրել է փոխառություն Տաթևիկ Սարգսյանին 16,450 հազ. դրամ: 2023թ.-ին փոխառությունից մարվել է 1,800 հազ. դրամ: Փոխառության մնացորդը առ 31.12.2023թ. կազմում է 14,400 հազ.դրամ:Փոխառության գումարը տրամադրվել է փոխառուին անտոկոս՝ մինչև 30.12.2024թ.:

7.Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային մնացորդ	4646	6870
Կանխիկ միջոցներ	6060	5500
	10,706	**12,370**

8. Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը համաձայն Ընկերության կանոնադրության կազմել է 100 հազար դրամ,որը լրիվ համալրվել է 2016թ:

9. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտքեր շահութահարկի հարկի գծով	1,891	545
Պարտքեր եկամտային հարկի գծով	1,221	609
Պարտքեր ԱԱՀ գծով	1,536	1,012
Պարտադիր այլ վճարներ	74	167
Կրեդիտորական պարտք գնումների գծով	66	77
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	3,839	1,398
Կրեդիտորական պարտք աշխատավարձի գծով	-	45
	8,627	**3,853**

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

10.Հասույթ, վաճառքի ինքնարժեք

Հասույթ		
Հազար դրամ	**2023թ**	**2022թ**
Ծառայությունների մատուցումից հասույթ	84,590	38,530
	84,590	**38,530**

Մատուցված ծառայությունների ինքնարժեք

Հազար դրամ	2023թ	2022թ
Աշխատավարձ	39,851	16,320
Մաշվածություն և ամորտիզացիա	1,096	308
Վառելիքի ծախսեր	932	913
Հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	600	
Գրասենյակային ծախսեր	347	255
Կադրերի վերապատրաստում	494	307
Գործուղման ծախսեր	636	808
Անդամավճարներ	573	
	44,529	**18,911**

11.Վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ	2022թ
Աշխատավարձ	21,024	7,147
Չփոխհատուցվող հարկեր, պարտադիր վճարներ	7	282
Բանկային ծախսեր	56	84
Վառելիքի ծախսեր		450
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	33	-
Այլ ծախսեր	80	58
	21,200	**8,021**

12. Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ	2022թ
Վարձակալության գծով ծախսեր	5,625	4,750
Այլ ծախսեր		15
	5,625	**4,765**

13. Այլ եկամուտներ

Հազար դրամ	2023թ	2022թ
Ֆինանսական ներդրումներից եկամուտներ	-	52
	-	**52**

14. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են.

Հազար դրամ	2023թ	2022թ
Ընթացիկ շահութահարկ՝		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	2906	1366
Հետաձգված հարկեր		
Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	(439)	(76)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	**2,467**	**1,290**

Հետաձգված հարկային ակտիվը առաջացել է արձակուրդի պահուստ ստեղծելու հետևանքով:

15.Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.9-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ		
Հազար ՀՀ դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	10,540	3,796
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10,706	12,370
	21,246	16,166

Ֆինանսական պարտավորություններ		
Հազար ՀՀ դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտք գնումների գծով	66	77
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	3,839	1,398
Կրեդիտորական պարտք աշխատավարձի գծով	-	45
	3,905	1,520

16. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտարժութային ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ: Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը արտարժույթով գործարքներ չի կատարել:

գ) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրված փոխառությունների և ստացված վարկերի ու փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք):

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չունի տոկոսադրույքների փոփոխությունների ազդեցության ենթական ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

դ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր

պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի և այլ անձանց տրված փոխառությունների գծով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև հաճախորդների բազայի կառուցվածքը:

Ենթարկվածությունը վարկային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

հազ.դրամ	2023թ	2022թ
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	10,540	3,796
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,706	12,370
	21,246	16,166

ե) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

2022թ.

հազ.դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	0-6 ամիս	6-12 ամիս
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	1398	0	0	1398
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	77	77	0	-
	1475	**77**	**0**	**1398**

2023թ.

հազ.դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	0-6 ամիս	6-12 ամիս
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	3839	0	0	3839
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	66	66	0	-
	3905	**66**	**0**	**3839**

Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

17. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 3 – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկեկո
- Ծանոթագրություն 6 – փոխառություններ

18. Պայմանականություններ

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից ապահովագրություն չունի:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժութային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Ընկերությունը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Ընկերության գործարքների և գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով,որի արդյունքում հնարավոր է ,որ այն գործարքների և գործնեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի,որոնց նախքինում հարկային մարմինները չէին անդրադարձել:Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը,տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Ընկերությունը գտնում է, որ 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Ընկերության հարկային, արժութային և մաքսային դրությունը կայուն է:

Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

19. Գործարքներ կապակցված կողմերի միջև

Վերահսկողություն

Ընկերության հիմնադիրներ են հանդիսանում թվով 3 ՀՀքաղաքացիներ,որոնցից ոչ մեկը չունի միայնակ վերահսկողություն Ընկերության նկատմամբ:

Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ	21,024	7,147
	21,024	**7,147**

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված փոխառություններ	22,073	17,200
	22,073	**17,200**

20. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտվող դեպքեր կամ էական չճշգրտվող դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2023թ) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը՝(27.03.2024թ) տեղի չեն ունեցել: